



«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Հանրաքվրթական ոլորտում ՏՀՏ-ի ներդրման դերը և անհրաժեշտությունը

ՀԵՂԻՆԱԿ - Նարինե Խաչատրյան

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/ - Երաժշտություն

ՂԵԿԱՎԱՐ – Կ. Գալուստյան

ՍԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն.....	3
1. Ինչ է ՏՀՏ-ն	6
2. Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը դասապրոցեսում	8
2.1 ՏՀՏ-ների կիրառումը և անհրաժեշտությունը հանրակրթական ոլորտում	12
2.2 Տեղեկատվական կրթության հիմնական ուղղությունները դպրոցում.....	14
Եզրակացություն.....	17
Օգտագործված գրականության ցանկ.....	19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեծ է հանրակրթության ոլորտում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների (S2S) ներդրման դերն ու նշանակությունը: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը կրթության ոլորտում ուղղված է աշխարհի տարբեր տարածաշրջաններում <<տեղեկատվական անհավասարության>> հաղթահարմանը: Նոր տեխնիկան, տեխնոլոգիաները, ծրագրային հզոր ապահովումը և վեբ-ծառայությունների համատարած ծավալումը դառնում են մի ամբողջություն, ինչը մեծ հնարավորություններ է ապահովում ցանկացած ժամանակ և ցանկացած տեղում սովորելու համար:

Մեր ժամանակներում, անշուշտ, փոխվել են կրթությանը ներկայացվող պահանջները. բազային գիելիքներից և նոր գիտելիքների մշտական ձեռք բերումից բացի ժամանակակից աշխատողը պետք է կարողանա նաև արդյունավետ կիրառել տեղեկատվական աղբյուրներն ու պաշարները Հասարակական կյանքի անբաժան մաս հանդիսացող կրթության նպատակը մանկավարժության մեջ միշտ եղել է անփոփոխ՝ աճող սերնդի կրթումն ու դաստիարակումը, նախապատրաստումը կյանքին, սակայն անընդհատ փոփոխվում են կրթությանը ներկայացվող հասարակական պահանջները՝ ելնելով տվյալ հասարակության տնտեսական, գիտական, մշակութային զարգացմամբ:

Գլոբալ տեղաշարժերի հետևանքով փոփոխությունների են ենթարկվում նաև կրթության խնդիրները: Այդ խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ են վերանայել ուսուցման գործընթացը կազմակերպելու մեթոդներն ու ձևերը, որոնք հնարավորություն կտան սովորողներին քայլել ժամանակին համընթաց: Սովորողների ճանաչողական ձևավորումն ու զարգացումը ժամանակակից մանկավարժության կողմից դիտարկվում է՝ որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր: Իսկ արդի մանկավարժական որոշումները նպատակ ունեն ուսուցման գործընթացը դարձնել հասարակական պահանջին համապատասխան և լուծել կրթության կարևոր խնդիրը: Այդ կարևոր խնդիրը լուծելու հարցում ժամանակի հրամայական է դառնում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցում՝ որպես ուսումնական գործընթացի կարևոր բաղկացուցիչ մաս:

Աշակերտը դպրոցում գիտելիքներ մտապահողից ու վերարտադրողից (ուսուցման օբյեկտ) դառնում է ուսուցման գործընթացի ակտիվ, գործուն մասնակից (ուսուցման սուբյեկտ): Ուսուցիչը պետք է դառնա ոչ թե ուսումնական գործընթացի թելադրողը, այլ լինի ուղղորդողի, օգնականի,

խթանողի, մասնակցի դերում և հնարավորություն ընձեռի սովորողներին՝ ինքնուրույն մտածելու և անկաշկանդ ինքնարտահայտվելու: Իսկ մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաները, այդ թվում նաև ՏՀՏ-ները դառնում են ուսուցչի կարևոր ռազմավարությունը ուսումնական գործընթացի ճիշտ և արդյունավետ կազմակերպման գործում: Փաստորեն ժամանակակից կրթության հիմնական ուղղվածություն մի կողմից պայմանավորված է կրթության որակի նոր պահանջների առաջացմամբ, գիտատեխնիկական աննախադեպ առաջընթացի թելադրմամբ, մյուս կողմից մանկավարժի, ուսուցչի ինքնակայացմանը անձնային ներուժի բացահայտմանը և զարգացմանը միտված մասնագիտական աջակցությամբ:

Հետազոտական աշխատանքի ուսումնասիրվել է տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիական գործիքների կիրառման հնարավորությունները հանրակրթական դպրոցում ուսուցման գործընթացում՝ ցույց տալով դրանց կիրառման արդյունավետությունը: Ինչպե՞ս ուսումնական դրդապատճառներ ձևավորել և դասագործընթացում ամբողջությամբ ներգրավել համակարգչային տեխնոլոգիաներին հետորեն տիրապետող այն աշակերտներին, որոնք անուշադիր են դասի ընթացքում, ձանձրանում են ավանդական մեթոդներով անցկացվող դասերից:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է ուսումնական գործընթացում մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաների՝ մասնավորապես ՏՀՏ-ների արդյունավետ և նպատակային կիրառմամբ՝ այն վերափոխելով և համապատասխանեցնելով դպրոցականների տարիքային և անհատական առանձնահատկություններին, չվնասելով առողջությունը:

Հետազոտության օբյեկտը հանրակրթական ոլորտում ուսուցման գործընթացն է՝ ուղղված սովորողների ճանաչողական գործընթացի ակտիվ և ինքնուրույն իրականացմանը, ՏՀՏ ուսուցման գործընթացում առավել արդյունավետ ու հեշտորեն կիրառվող այն գործիքների ներառմանը, որոնք կարող են գործնական օգնություն լինել ներկայումս գործող ուսուցիչներին: Հետազոտության առարկան հանրակրթական ոլորտում դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացմանը նպաստող ՏՀՏ-ների կիրառությունն է:

Հետազոտության նպատակն է բացահայտել և հիմնավորել հանրակրթական ոլորտում ՏՀՏ-ների կիրառման առանձնահատկությունները՝ որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական և ստեղծագործական կարողությունների ձևավորմանը և զարգացմանը նպաստող մանկավարժական գործընթացի:

Նպատակն իրականացնելու համար առաջադրված խնդիրներն են՝

- բացահայտել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտությունը դպրոցում,
- վերլուծել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ձևերն ու մեթոդները դպրոցում,
- անցկացնել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ դասեր, գործնական աշխատանքներ,
- ուսումնասիրել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ դասերի ծրագրային համապատասխանելիությունն ու արդյունավետությունը:

Հետազոտական աշխատանքի տեսական նշանակությունն այն է, որ վերլուծության են ենթարկվել տեղեկատվական տեխնոլոգիաները՝ որպես արդի և ադապտիվ միջոցներ, որոնք նպաստում են սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Հետազոտական աշխատանքի գործնական նշանակությունն այն է, որ տեղեկատվական տեխնոլոգիաները՝ որպես ժամանակի հրամայական, կարող են համապատասխանեցվել դպրոցականների տարիքային առանձնահատկություններին՝ նպաստելով ուսումնական գործընթացի ակտիվացման և արդյունավետության բարձրացմանը:

1. ԻՆՉ Է ՏՀՏ-Ն

Ինֆորմացիոն տեխնոլոգիաները (IT), ինչպես նաև՝ Ինֆորմացիոն տեղեկատվական տեխնոլոգիաները ստեղծված են ինֆորմացիայի ստացման, պահպանման, մշակման և փոխանցման գործընթացներ իրականացնելու համար, ինչպես նաև այդ գործընթացների մեթոդների մշակման համար: Ձեռագրերի ստեղծումից հետո, առաջին քայլերը դեպի տեղեկատվական հասարակություն, հատկանշվեցին էլեկտրական հեռագրի, այնուհետև հեռախոսի և ռադիոհեռախոսի միջոցով, մինչդեռ հեռուստատեսությունը, Ինտերնետը, ավելի ուշ բջջային հեռահաղորդակցումը և GPS-ը ասոցացրեցին պատկեր, տեքստ և «առանց լար» բառերը: Այսօր Ինտերնետը և հեռուստատեսությունը դարձել են հասանելի բջջային հեռախոսների վրա. վերջինս ծառայում է նաև որպես ֆոտոխցիկ: XX դարի վերջին տասնամյակում ինֆորմատիկայի և հեռահաղորդակցման մոտեցումը նպաստում են բաղադրիչների փոքրացմանը, որոնք թույլ են տալիս 2000 թվականից սկսած արտադրել «բազմաֆունկցիոնալ» սարքեր՝ մատչելի գներով: ՏՀՏ-ների օգտագործումը չի դադարում տարածվել հատկապես հարուստ երկրներում, բայց միշտ կա վտանգ՝ շեշտադրելու սոցիալական և թվային բեկումը, ինչպես նաև սերունդների միջև անջրպետը: Մարդկային գործունեության ամենատարբեր ոլորտներում՝ գյուղատնտեսությունից ու անտառային տնտեսության կառավարումից (անտառների ուրվագծում՝ անօրինական ծառահատման դեմ պայքարելու համար) մինչև տիեզերական միջավայրի համալիր դիտարկում (մոնիթորինգ) կամ կենսական բազմազանություն, ակտիվ ժողովրդավարություն, առևտրի, հեռաբժշկության, տեղեկատվության, տվյալների բազայի կառավարում, ցանցի, մեքենայացման և ռազմական բնագավառներ, աջակցություն հաշմանդամներին (կույրերը օգտագործում են զարգացած ձայնային համադրիչներ, ինչպես նաև հատուկ գրությամբ սկավառակներ) և այլն, ՏՀՏ-ն նպատակ ունի հատուկ տեղ գրավել մարդկային կյանքում և հասարակական գործունեության մեջ: ԻՏ-ները պահանջում են լուրջ պատրաստվածություն, մեծ ներդրումներ և գիտական բարդ սարքավորումներ: ԻՏ ներդրումը պետք է սկսվի մաթեմատիկական և ծրագրային ապահովման ստեղծմամբ, մասնագետների պատրաստման համակարգում ինֆորմացիոն հոսքերի ձևավորմամբ: Արդի ԻՏ-ի հիմնական գծերն են՝

- ինֆորմացիայի համակարգչային մշակումը ըստ տրված ալգորիթմների,

- մեքենայական կրիչների վրա մեծ ծավալով ինֆորմացիայի պահպանումը,
- սահմանափակ ժամանակահատվածում ինֆորմացիայի փոխանցում ցանկացած հեռավորության:

2. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԴԱՍԱՊՐՈՑԵՍՈՒՄ

Տեղեկատվական տեխնոլոգիաները մեծ դեր կարող են կատարել դասապրոցեսում: Նորագույն տեխնոլոգիաների կիրառումը դասապրոցեսում կրկնակի, եռակի աշխատանք է ուսուցչի համար: Ուսուցիչը պետք է նախօրոք ՏՀՏ գործիքներով պատրաստի պաշարներ / դաս, թեստեր, վարժություններ, խաղեր և այլն/, որոնք աշխատատար և ժամանակատար են, որին շատ ուսուցիչներ չեն տիրապետում:

ՏՀՏ գործիքներով ուսուցումը կազմակերպելու համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները.

- դասավանդողի և սովորողի համար՝ համակարգիչների և ցանցի առկայություն,
- դասավանդողի համար՝ դասընթաց մշակելու կարողություն, վարելու հմտություն,
- սովորողի համար՝ համակարգչից օգտվելու կարողություն:

Մասնագիտական գիտելիքների, ուսուցման մեթոդների կատարելագործման ու զարգացման հետ համատեղ այսօր ուսուցչի համար բացվել են ինքնակրթման այլ ասպեկտներ:

Կյանքն անցնում է, գիտությունն արագ տեմպերով զարգանում է, ՏՀՏ-ները նույնպես, ուստի պետք է օգտագործել դրանց առավելությունները դասապրոցեսում, ներմուծելով ժամանակակից դասավանդման մեթոդներ ու հնարներ:

Համացանցում շատ նյութեր կան մաթեմատիկայի վերաբերյալ, որոնց օգնությամբ կարելի է առօրյա միապաղաղ դասերը դարձնել ավելի հետաքրքիր ու հաճելի աշակերտների համար:

Այսօր համակարգիչներ օգտագործելու ունակությունը կարող է նույնքան կարևոր լինել, որքան կարդալու, գրելու, ձայնագրելու, մեքենա վարելու կամ հեռախոսից օգտվելու ունակությունը:

ՏՀՏ-ները ուսուցչի համար անփոխարինելի են որպես գիտելիքների աղբյուր և գործիք, որոնցով կարելի է կառուցել դասը: Դպրոցում ՏՀՏ-ների կիրառման շրջանակները լայն են: Դրանք կիրառվում են համադպրոցական, ինքնուրույն 8 աշխատանքներ, թիմային աշխատանքներ, մրցույթներ կազմակերպելու համար, ստեղծագործական նախագծերի մշակման և ներկայացման, ցուցադրումների համար:

ՏՀՏ-ները կիրառվում են նաև գնահատման թեստային աշխատանքների կատարման նպատակով:

SZS-ի կիրառումը դասապրոցեսում.

- Ուժեղացնում է աշակերտների մոտիվացիան
- Հնարավորություն է տալիս օգտագործել թարմ ինֆորմացիա
- Իրականացնել երկխոսություն ինֆորմացիայի աղբյուրի հետ
- Խնայել ժամանակը
- Հնարավորություն է տալիս լսարանային կամ անհատական պարապմունքները դարձնել ավելի հետաքրքիր
- Ուսուցչին տալիս է մեծ պաշարների շտեմարան

Դասապրոցեսում SZS-ներն ակտիվորեն օգտագործելու համար ուսուցիչը պետք է հմտորեն տիրապետի դրանց:

Կրթությունը մարդկության կենսագործունեությունը և առաջընթացն ապահովող անհրաժեշտ գործոն է ու երաշխիք: Այն հասարակական կյանքի անբաժանելի մասն է, որի նպատակը մանկավարժության մեջ միշտ եղել է նույնը՝ կրթել ու դաստիարակել աճող սերնդին՝ նախապատրաստելով կյանքին, ձևավորել տվյալ ժամանակաշրջանի համար հասարակության լիարժեք անդամներ: Բոլոր ժամանակաշրջաններում կրթական գործընթացի նպատակը մնում է անփոփոխ, սակայն կրթության առջև դրված խնդիրներն անընդհատ փոփոխվում են՝ պայմանավորված նոր հասարակական պահանջի ձևավորմամբ, տվյալ հասարակության տնտեսական, գիտատեխնիկական, մշակութային զարգացմամբ: Այս ամենի հետ մեկտեղ կրթական համակարգի վրա իրենց անմիջական ներգործությունն են ունենում նաև համաշխարհային արդի զարգացումները՝ առաջադրելով ու պահանջելով տարատեսակ խնդիրների լուծման անհրաժեշտություն: «Գիտական մտքի զարգացման և բարձր տեխնոլոգիաների ստեղծման մեջ գործուն դեր ունեցող երկրները կարողանում են թռիչքային առաջընթաց ապահովել տնտեսության մի շարք ռազմավարական ճյուղերում՝ օժանդակելով նաև հասարակական կյանքի մյուս ոլորտների ներդաշնակ և համամասնական վերելք»(3, էջ 5): Նշված գործընթացներից դուրս գտնվող երկրների համար վտանգ է ստեղծվում հայտնվելու մշտապես հետևողի և սպառողի կարգավիճակում:

Գիտատեխնիկական առաջընթացի աննախադեպ արագության, բարձր տեխնիկաների հարաճուն ներդրման և կիրառման հետևանքով ազգային և համաշխարհային տնտեսություններն անընդհատ վերակառուցվում են: Մրա արդյունքում արդյունաբերական տնտեսությունը

վերափոխվում է «գիտելիքների տնտեսության» (3, էջ 5), իսկ հասարակությունը՝ տեղեկատվական հասարակության ուր գերակայողը տեղեկատվական գիտելիքն է: Ժամանակակից հասարակությանը պետք է այնպիսի կրթություն, որը հասարակության յուրաքանչյուր անդամին հնարավորություն կտա զարգացող ու փոփոխվող աշխարհում քայլել այդ փոփոխություններին համընթաց: Անընդհատ տնտեսական ու տեխնիկական առաջընթացը, տեղեկատվության կուտակումները հանգեցրին կրթության արդիականացման, նորարարական 7 գործունեության և կրթության բարեփոխումների անհրաժեշտության: Ինչպես գիտենք՝ կրթության կայուն և հաստատուն հիմքերը դրվում են տարրական դպրոցում, և տարրական դպրոցի հիմնական խնդիրը երեխայի ներուժի բացահայտումն ու զարգացումն է: Հենց կրտսեր դպրոցից է անհրաժեշտ բացահայտել սովորողների ներքին հնարավորությունները դասի ճիշտ պլանավորման, արդյունավետ անցկացման, ճիշտ տեխնոլոգիաների ընտրությամբ, դասարանում հոգևոր մթնոլորտ ստեղծելու միջոցով՝ չվնասելով սովորողի հոգևոր և ֆիզիկական առողջությունը:

Ուսումնական գործընթացի կազմակերպումը և իրականացումը ՏՀՏ-ների ներդրմամբ դարձել է ժամանակի պահանջ ու հրամայական, բայց կրթական այս «հորձանուտում» ռիսկային խումբ է դառնում տարրական դպրոցը: Ընդ որում, փոխվել է նաև դպրոց հաճախելու տարիքային սահմանը՝ վեց տարեկանից, ինչ էլ իր հերթին ակնառու է դարձնում կրտսեր դպրոցականի առանձնահատկությունները: Այստեղ պահանջվում են լուրջ և բազմակողմանի ուսումնասիրություններ և հետազոտական աշխատանք՝ համոզվելու և արդարացված համարելու տարրական դպրոցի ուսումնական գործընթացի կազմակերպումը ՏՀՏ-ների կիրառմամբ՝ որպես այդ գործընթացի կարևոր բաղկացուցիչ մաս: Հնարավոր կլինի արդարացնել կամ մերժել ՏՀՏ-ների մուտքը դպրոց, մասնավորապես կրտսեր օղակ՝ միայն հաշվի առնելով կրտսեր դպրոցի սովորողների տարիքային առանձնահատկությունները և ՏՀՏ-ների երկակի ազդեցությունը սովորողների վրա:

Ուսուցման գործընթացում ՏՀՏ-ների կիրառումը, բնականաբար, ուսուցչից ևս պահանջում է զգուշավորություն, ստեղծագործական մոտեցում և որոշակի աշխատանք ինչպես սովորողների հետաքրքրությունը խթանելու և բավարարելու, այնպես էլ դասագրքում զետեղված դասանյութն ավելի տեսողական ու ցայտուն դարձնելու, պասիվ գիտելիքը գործնական և կիրառելի դարձնելու համար: Ուսուցիչն իրեն կարող է վերապահել ստեղծագործական ազատություն դասը կազմակերպելու առումով, նույն ազատությունը տալ նաև աշակերտներին նպատակին ավելի

արդյունավետ հասնելու համար: «Վարպետ է այն ուսուցիչը, ով կարողանում է միևնույն նյութի կամ միևնույն թեմայի վերաբերյալ բացել տարբեր պատուհաններ» (13, 2005, 1-2, էջ 38):

2.1 ՏՀՏ-ՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Կրտսեր դպրոցը կրթության այն հիմնաքարն է, որի որակից է կախված երեխայի հետագա ուսուցումը: Սա տարրական դպրոցի ուսուցչի համար հատուկ պատասխանատվություն է սահմանում: Նրա խնդիրն է ոչ միայն կարդալ ու գրել սովորեցնել, այլ նաև երեխայի հոգևոր հիմքը հաստատել, բացահայտել նրա լավագույն որակները, ուսումնական գործունեության ուղիները ցույց տալ: Հենց վերջինն էլ հատկապես կարևոր է այժմյան արագ փոփոխվող, տեղեկատվությամբ հեղեղված աշխարհում: Պետք է սովորեցնել երեխային աշխատել տեղեկատվության հետ, սովորեցնել սովորել: Դա նշանակում է, որ կրթական ցանկացած գործընթաց պետք է իրականացվի նաև ժամանակակից տեխնիկական միջոցների զինումով, այլ կերպ ասած ՏՀՏ-ների կիրառումն ուսումնական գործընթացում անհրաժեշտ է և ժամանակի հրամայական: Ուղղակի ուսուցիչը պիտի դառնա ճիշտ ուղղորդող տեղեկատվական «ահռելիքառում», որ աշակերտը (հատկապես կրտսեր դպրոցում) սովորի աշխատել տեղեկատվական աշխարհում:

Ակադեմիկոս Ա. Պ. Սեմյոնովի հայտարարությունը, թե՛ «ժամանակակից դպրոցի կարևորագույն խնդիրն է սովորեցնել մարդուն ապրել տեղեկատվական աշխարհում» (26), պետք է որոշիչ լինի յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքում:

Այդ նպատակների իրականացման համար դասվարի աշխատանքային գործունեության մեջ ՏՀՏ միջոցների կիրառումը անհրաժեշտություն է դառնում: Սա թույլ է տալիս ամրակայելու այն միտքը, որ ՏՀՏ-ները նույնպես կարելի է դասել մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաների շարքում՝ որպես ժամանակի կարևոր պահանջ:

Կրտսեր դպրոցականների ուսումնական գործընթացում ՏՀՏ-ների օգտագործման նպատակահարմարության մասին են խոսում նրանց տարիքային այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են տեսողական - պատկերավոր մտածողության զարգացումը՝ բանավոր և տրամաբանական մտածողության համեմատ, ինչպես նաև անալիզատորների անհավասար եւ ոչ բավարար զարգացումը, որոնց շնորհիվ են երեխաները ընկալում տեղեկատվությունը՝ դրա հետագա մշակման համար: Եթե տեղեկատվությունը չի ընկալվել, ապա այն չի կարող հասկանալի, յուրացված լինել, չի կարող դառնալ անհատի սեփականությունը, դառնալ նրա մշակույթի ու ձևավորված աշխարհայացքի տարրը:

Այսօր ՏՀՏ-ների լայնածավալ կիրառումը իր տեղն է գտնում առաջին հերթին լավ կազմակերպված դասի ժամանակ: Դպրոցի տեղեկացվածությունը կարևոր դերակատարություն ունի կրթության ժամանակակից որակի և 21-րդ դարի երեխայի տեղեկատվական մշակույթի ձևավորման համար: Այստեղից էլ բխում են ՏՀՏ-ների օգտագործման նպատակները.

- բարձրացնել սովորելու մոտիվացիան /շարժառիթը/
- մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը
- նպաստել սովորողների ճանաչողական կարողությունների խթանմանը
- բարելավել դասի անցկացման մեթոդները
- ժամանակին համակարգել ուսուցման և դաստիարակության արդյունքները
- պլանավորել և համակարգել սեփական աշխատանքը
- օգտագործել այն որպես ինքնակրթության միջոց
- արագ և որակյալ պատրաստվել դասին:

2.2 ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Տարրական կրթության տեղեկատվական ոլորտում ինտեգրվելու գործընթացը ընթանում է հետևյալ ուղղություններով

- ՏՀՏ-ների օգտագործումը որպես ուսուցման դիդակտիկ միջոցներ /դիդակտիկ միջոցների ստեղծում, տարբեր առարկաների համար պատրաստի համակարգչային ծրագրերի մշակում և օգտագործում, աշխատանքի մեջ ինտերնետ-ռեսուրսների օգտագործում և այլն/:
- Դասի կազմակերպում ՏՀՏ-ների օգտագործմամբ / ՏՀՏ-ի օգտագործում դասի տարբեր փուլերում, գիտելիքների ամրապնդման և ստուգման համար, խմբային և անհատական աշխատանքի կազմակերպում, աշխատանք ծնողների հետ/:
- Դպրոցականների նախագծային աշխատանքների իրականացում ՏՀՏ-ների օգտագործմամբ:

ՏՀՏ-ների օգտագործման հնարավորությունների շառավիղը բավականին լայն է: Բնարկե, աշխատելով դպրոցականների հետ, անհրաժեշտ է հիշել պատվիրանը՝ «Մի վնասիր», խոսքը վերաբերում է հոգևոր և ֆիզիկական առողջությանը, որը շատ կարևոր է դեռևս հոգեպես և ֆիզիկապես ոչ լիովին ձևավորված անձի համար:

Ուսումնական գործընթացի կազմակերպումը դպրոցում առաջին հերթին պետք է խթան հանդիսանա սովորողների ճանաչողական կարողությունների ակտիվացման, ուսումնական նյութի հաջող յուրացման համար և նպաստի սովորողի հոգևոր զարգացմանը: Հետևաբար, ՏՀՏ-ն պետք է կատարի որոշակի կրթական գործառույթ, օգնի երեխային կողմնորոշվել տեղեկատվության հեղեղի մեջ, ընկալել այն, հիշել, և ոչ մի դեպքում չվնասել առողջությունը: ՏՀՏ միջոցները պետք է գործեն որպես ուսումնական գործընթացի օժանդակ տարր, այլ ոչ հիմնական, լինեն օգնող ու օժանդակող: Հաշվի առնելով կրտսեր դպրոցականի հոգեբանական առանձնահատկությունները, ՏՀՏների հետ աշխատանքը պետք է հստակ մտածված և չափավորված լինի:

ՏՀՏ-ների օգտագործմամբ ուղեկցվող դասերը իրենց պարզության, գեղեցկության և տեսանելիության շնորհիվ ուսումնական նյութի ընկալման ընթացքում առավել մեծ տպավորություն են թողնում սովորողների հոգեբանա-հուզական ֆոնի վրա:

Մուլտիմեդիան նյութի և գործընթացների ներկայացումն է ոչ թե ավանդական տեքստային նկարագրությամբ, այլ ֆոտոնկարների, տեսանյութերի, գծագրերի, շարժանկարների, ձայնի օգնությամբ: Դասի անցկացումը մեդիայի շնորհիվ գրավում է դպրոցականներին: Այդ տիպի դասերի ընթացքում դասարանում ստեղծվում է իրական շփման իրավիճակ, որի ժամանակ երեխաները ձգտում են իրենց մտքերն արտահայտել սեփական բառերով, հաճույքով են կատարում առաջադրանքները, ուսումնական նյութի հանդեպ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում:

Մենք ունենք երկու հիմնական առավելություն՝ որակական և քանակական: Որակական առումով նոր հնարավորությունները ակնհայտ են, եթե ուղղակի համեմատենք բանավոր նկարագրությունները տեսաձայնային ներկայացման հետ: Քանակական առավելությունները արտահայտվում են նրանով, որ մեդիամիջավայրը անհամեմատելի մեծ է տեղեկության խտությամբ: Իսկապես, տեքստի 1 էջը դասավանդողը արտաբերում է 1-2 բառերի ընթացքում: Այդ նույն բառերի ընթացքում լայնեկրան տեսանյութը բերում է տեղեկատվության ավելի մեծ ծավալ:

«Հաստատված է, որ նյութի բանավոր մատուցման ժամանակ սովորողը բառերում ընկալում է և ընդունակ է վերլուծելու մինչև հազար պայմանական միավոր տեղեկություն, իսկ տեսողական օրգանների «միացման» դեպքում՝ մինչև 100 հազար այդպիսի միավոր» (23):

Դպրոցականի մոտ ավելի զարգացած է կամային ուշադրությունը, որը հատկապես կենտրոնանում է, երբ նրան հետաքրքիր է, երբ ուսումնական նյութը տարբերվում է պարզությամբ, պայծառությամբ, երբ սովորողի մոտ դրական հույզեր է առաջացնում:

Դպրոցի ևս մեկ առանձնահատկություն. տեքստ - նկար հարաբերակցության մեջ վերջինս գերիշխում է: Տեքստը եզրակացություններ են, ժամկետներ, հիմնաբառեր: Ամենագլխավորն այն է, որ կարող են կարդալ բոլորը: Եվ ահա այստեղ՝ շարժանկար է, որտեղ տառերը գրավում են ուշադրությունը և, նույնիսկ ամենափոքրերը ամեն ինչ կցանկանան կարդալ:

Մեդիադասերը օգնում են լուծել հետևյալ դիդակտիկ խնդիրները.

- յուրացնել թեմայի վերաբերյալ հիմնական գիտելիքները
- համակարգել ձեռք բերած գիտելիքները
- ձևավորել ինքնակառավարման հմտություններ
- ամբողջությամբ ձևավորել սովորելու շարժառիթ
- ուսումնամեթոդական օգնություն ցուցաբերել սովորողներին՝ ուսումնական նյութի ստեղծման ինքնուրույն աշխատանքում:

Այս տեխնոլոգիան կարելի է դիտել որպես ուսուցման բացատրական-զննական մեթոդ, որի հիմնական նպատակը ուսումնական նյութի հաղորդման ճանապարհով սովորողների տեղեկատվության յուրացման կազմակերպումն է և դրա հաջող ընկալման ապահովումը, որը ընդլայնվում է, երբ գուգահեռ միանում է նաև տեսողական հիշողությունը:

Հայտնի է, որ մարդկանց մեծամասնությունը մտապահում է լսածի 5% և տեսածի 20%-ը: Ձայնային և տեսողական տեղեկատվության միաժամանակյա օգտագործումը բարձրացնում է մտապահելու ունակությունը մինչև 40-50 %: Մեդիաձրագրերը ինֆորմացիան մատուցում են զանազան ձևերով և հենց դրանով ուսումնական պրոցեսն ավելի արդյունավետ են դարձնում:

Ժամանակի խնայողությունը անհրաժեշտ նյութի ուսումնասիրման համար միջինում կազմում է 30%, իսկ ձեռք բերած գիտելիքները պահպանվում են հիշողության մեջ ավելի երկար: Դպրոցում մեդիատեխնոլոգիաների օգտագործումը դասի ընթացքում սկզբունքորեն չի փոխում դասի կառուցվածքը: Նրա մեջ նախկինի պես պահպանվում են բոլոր հիմնական փուլերը, փոխվում են միայն դրանց ժամանակավոր բնութագրերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական ոլորտում ուսումնական պրոցեսի կազմակերպման փորձը ՏՀՏ-ների օգտագործմամբ թույլ է տալիս խոսել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և ուսուցման այլ միջոցների համադրման արդյունավետության բարձր մակարդակի մասին, որը ենթադրում է իմացություն գործունեության միջոցով: Այն սովորողների ուսուցման կազմակերպական ձևերի, բովանդակության, մեթոդների փոփոխման երկար և շարունակական պրոցես է:

Անկախ մեր կամքից նոր սերունդը տեղեկատվական դարաշրջանի ծնունդ է, և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը նրանց համար դառնում է «կենսական պահանջ»: Մեր երեխաների առողջությունը չվնասելու նկատառումներով ՏՀՏ միջոցների օգտագործումը սահմանափակելու մեր փորձերն ապարդյուն են: Տեխնիկական միջոցների, տեղեկատվական համաշխարհային ցանցերի օգտագործումը ժամանակի հրամայական է և ժամանակի պահանջ տեղեկատվական դարաշրջանի սերնդի համար:

Գիտակցելով այս կարևոր գործոնը՝ կրթական ոլորտը պետք է այն դարձնի ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մաս, նպատակաուղղի ուսուցման գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացմանը և դառնա ուղղորդող տեղեկատվական հորձանուտում:

Այսպիսով, ՏՀՏ-ի օգտագործումը դասին պետք է կրի նուրբ բնույթ: Ուսուցիչը, դասին նախապատրաստվելիս, պետք է հանգամանորեն մտածի ՏՀՏ-ի օգտագործման նպատակի, տեղի և ձևի մասին: Ճիշտ է՝ ՏՀՏ-ները հարստացնում են ուսուցման պրոցեսը, թույլ են տալիս ուսուցումը դարձնել ավելի արդյունավետ, նաև նպաստում են սովորողի ստեղծագործական զարգացմանը: Բայց մյուս կողմից տեղեկատվական ցանցերի մատուցած տեղեկատվությունը կարող է չարիք դառնալ դեռևս ձևավորվող անհատի համար: Ուստի մեծահասակների (տանը՝ ծնողներ, դպրոցում՝ ուսուցիչներ) մշտական հետևողականությունն այս գործընթացում պիտի լինի պարտադիր: Կարևոր է հասկանալ, թե ՏՀՏ միջոցները ինչպես և որտեղ կիրառել, որ դրանք կրտսեր դպրոցականին վնասելու փոխարեն ուսումնական գործընթացի կազմակերպումը դարձնեն ավելի արդյունավետ և նպատակաուղղված:

Այսպիսով, հանրակրթական ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը սուկ ժամանակների նոր միտում չէ, դա անհրաժեշտություն է: Նոր տեղեկատվական տեխնոլոգիաներն ուսուցչին տալիս են հսկայական հնարավորություն անցկացնելու ոչ միայն

պատկերավոր, հարուստ դասեր, այլ նաև արտադասարանային աշխատանքներ՝ գրույցներ, արձակուրդային առաջադրանքներ, արտադասարանային գործունեություն, ծնողական հանդիպումներ, մեր շրջակա աշխարհը տեսնելու ու ճանաչելու մեծ հնարավորություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալեքսանյան Թ., Հակոբյան Գ., Հերթական ատեստավորման ենթակա դասվարների մասնագիտական զարգացման, վերապատրաստման դասընթացի բովանդակային չափորոշիչ. ծրագիր, Երևան, 2014, 147 էջ
2. Աստվածատրյան Մ. և ուրիշներ, Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, Երևան, 2004, 232 էջ
3. Կրթություն 2015. ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիր (www.edu.am)
4. ՀՀ օրենքը «Կրթության մասին»
5. ՀՀ Կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիր
6. Հանրակրթական պետական կրթակարգ, կրթության ազգային ինստիտուտ, Երևան, 2004, 110 էջ
7. Հերթական ատեստավորման ենթակա դասվարների մասնագիտական զարգացման, վերապատրաստման դասընթացների ուղեցույց, ՀՀ ԿԳ նախարարի 2011թ. օգոստոսի 29-ի N997-Ա/Ք հրաման
8. Պետական կրթական չափորոշիչ
9. Պետրոսյան Հ., Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2012, 564 էջ
10. Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան Ան-Ջոն, 2008, 316 էջ
11. Գիտամեթոդական հանդես, «Ընտանիք և դպրոց», 2012, N2, էջ 42-45
12. Գիտամեթոդական հանդես, «Մանկավարժ», Երևան, 2007, էջ 159-162
13. Գիտամեթոդական հանդես, «Նախաշավիղ», N1-2, 2005, էջ 33-40
14. Գիտամեթոդական հանդես, «Նախաշավիղ», N4, 2003, էջ 3-8
15. Գիտամեթոդական հանդես, «Նախաշավիղ», N5-6, 2004, էջ 4-23, 100-106
16. Գիտամեթոդական հանդես, «Նախաշավիղ», N5, 2011, էջ 47-63 16
17. Գիտամեթոդական հանդես, «Նախաշավիղ», N3, 2014, էջ 47-52
18. Գիտամեթոդական հանդես, «Նախաշավիղ», N1-2, 2015, էջ 25-41
19. Գիտամեթոդական հանդես, «Նախաշավիղ», N2, 2015, էջ 3-10